ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/13

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ներկայացուցիչ՝ Գ. Կարապետյանի,
«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի և Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11» ծածկագրով բաց մրցույթ, Երևանի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար դետալների և շինվածքների ձեռքբերում և տեղադրում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների

նախարարության կողմից 19.01.2021թ.-ի թիվ 26/26-1/536-2021 գրությամբ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի 13.01.2021թ.-ի թիվ 25/01-25/338 գրության հիման վրա, 19.01.2021թ.-ին «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 19.01.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 19.01.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/13 համարի ծածկագիրը:

27.01.2021թ.-ին, 05.02.2021թ.-ին, 11.02.2020թ.-ին և 19.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 19.02.2021թ.-ին:

2. <u>Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանը 13.01.2021թ.-ի թիվ 25/01-25/338 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

«Երևանի քաղաքապետարանի և «ԼԻՖՏԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.05.2020 թվականին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2» ծածկագրով

գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարել սույն պայմանագրի (այսուհետ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույց-տեխնիկական բնութագրով նախատեսված Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բ/շ վերելակների դետալները և սարքավորումները տեղադրումով (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել տեղադրված ապրանքը և վճարել դրա համար»:

Նշված պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել՝ մինչև 30.08.2020թ.:

Սույն պայմանագիրը՝ 3664100 /երեք միլիոն վեց հարյուր վաթսունչորս հազար հարյուր/ դրամի փոխարեն կատարվել է 2015907 /երկու միլիոն տասնհինգ հազար ինը հարյուր յոթ/ ՀՀ դրամի չափով, չեն կատարվել 1648193 /մեկ միլիոն վեց հարյուր քառասունութ հազար հարյուր իննսուներեք/ ՀՀ դրամի չափով ապրանքների մատակարարումներ, այսինքն պայմանագրով նախատեսված թիվ 24-րդ չափաբաժինը չի մատակարարվել, իսկ 5, 6, 8, 9, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, 20, 22, 25 և 26-րդ չափաբաժինները թերամատակարարվել են:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Խախտվել է պայմանագրի 1.1 կետը, այսինքն չի կատարվել պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված քանակի ապրանքների մատակարարումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է նշված պայմանագրերով սահմանված պարտավորությունները՝ Երևանի քաղաքապետարանը, ի

դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա որոշում/, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվել է Ընկերության հետ կնքված ապրանքների մատակարարման գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությունով, առաջարկում եմ «ԼԻՖՏԷԼԵԿՏՐՈՆԻՔՍ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. <u>«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 20.01.2021թ.-ի գրությամբ դիմել է «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.01.2021թ.-ի թիվ 26/26-1/536-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն 04.02.2021թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթում նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/13 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 19.05.2020թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2 ծածկագրով պայմանագիր, ըստ որի «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն պետք է մատակարեր Երևանի քաղաքապետարանի Արաբկիր վարչական շրջանի բ/շ վերելակների դետալներ և սարքավորումներ /համապատասխան Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրի- գնման ժամանակացույցի/:

Համաձայն՝ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցի՝ ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել՝ մինչև 30.08.2020թ.:

Վերը նշված պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից՝ ի դեմս Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա. Դանիելյանի, 13.01.2021թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ հիմքում դնելով Պայմանագրի 1.1 կետը՝ այսինքն չի կատարվել պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված քանակի ապրանքների մատակարարումը:

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա. Դանիելյանը, միակողմանի մասնակի լուծելով «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 19.05.2020թ. կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2 ծածկագրով պայմանագիրը, համապատասխան հիմքերը ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Վերոհիշյալի արդյունքում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի վարույթում նախաձեռնվել է «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով թիվ ՍՑ-ԼՕ-2021/13 ընթացակարգը:

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած արտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող

հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Ինչպես արդեն հայտնել ենք, «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 19.05.2020թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2 ծածկագրով պայմանագիր, ըստ որի «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն պետք էր մատակարեր Երևանի քաղաքապետարանի Արաբկիր վարչական շրջանի բ/շ վերելակների դետալներ և սարքավորումներ /համապատասխան Հավելված 1 գնման ժամանակացույցի/:

Վերը նշված պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից միակողմանի մասնակի լուծվել է՝ հիմքում դնելով Պայմանագրի 1.1 կետը՝ այսինքն չի կատարվել պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված քանակի ապրանքների մատակարարումը:

Եվ այսպես, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքների վրա.

1.ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ նաև՝ Կարգ/ 45-րդ կետի՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գտնում ենք, որ իրավաչափ չէ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա. Դանիելյանի կողմից «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար ՍՊԸ-ի տվյալները 13.01.2021թ. թիվ 25/01-25/338 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելը:

Մասնավորապես, Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա. Դանիելյանը, չհանդիսանալով տվյալ պայմանագրով պատվիրատու, 13.01.2021թ. թիվ

25/01-25/338 գրությամբ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար ՍՊԸ-ի տվյալները ներկայացրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը:

Նշված թիվ 25/01-25/338 գրությամբ նաև հայտնվել է, որ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի ա) պարբերությունով, առաջարկում է «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ վերոհիշյալ գործով Պատվիրատուի է հանդիսացել ոչ թե Արաբկիր վարչական շրջանը, այլ Երևանի քաղաքապետարանը:

Ըստ թիվ ՍՅ-ԼՕ-2021/13 ընթացակարգի նիստին հայտնած դիրքորոշման՝ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի կողմից «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի տվյալները ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացնելու իրավական հիմքը հանդիսացել է Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա հրամանը, որի 1-ի կետով Երևանի քաղաքապետը Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարներին լիազորել է պայմանագրի ոչ պատշաճ կատարման կամ չկատարման հետևանքով իրականացնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթաց:

Վերոհիշյալ ձևակերպման բովանդակությունից պարզ է դառնում, որ Երևանի քաղաքապետը չի լիազորել Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարներին իրականացնել Կարգի 45-րդ կետով Պատվիրատուին վերապահված լիազորությունը, մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմին գրավոր ուղարկելը:

Երևանի քաղաքապետի 16.11.2020թ. թիվ 3576-Ա հրամանով Երևանի քաղաքապետը Երևան քաղաքի վարչական շրջանի ղեկավարներին ընդամենը լիազորել է պայմանագրի ոչ պատշաճ կատարման կամ չկատարման հետևանքով իրականացնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթաց, մինչդեռ մասնակցին ներառելու գործընթացը իրականացնում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից այդ գործընթացը նախաձեռնելու հիման վրա, իսկ Պատվիրատուն գնումների մասին ՀՀ

օրենսդրության համաձայն՝ օժտված չէ իրավունքով իրականացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթաց:

Գտնում ենք, որ այս պայմաններում Կարգի 45-րդ կետով նախատեսված մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր լիազորված մարմնին ուղարկելը չի կարող նույնացվել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառման գործընթացի իրականացման հետ:

Մինչդեռ՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Հետևաբար՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկում է Պատվիրատուն կամ Պատվիրատուի կողմից այդ գործողությունը կատարելու լիազորություն ունեցող անձը: Գտնում ենք, որ այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը օրենքներով:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՍՅ-ԼՕ-2021/13 ընթացակարգի հիմքերի ուղարկվել են ոչ պատշաճ սուբյեկտի կողմից, ուստի և տվյալ ընթացակարգը ՀՀ ՖՆ կողմից նախաձեռնվել է ոչ իրավաչափ, իսկ

ոչ իրավաչափ եղանակով և հիմքով նախաձեռնված ընթացակարգը չի կարող հանգեցնել մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

2. Պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետի փաստը քննելիս՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար դետալների և սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների հանձնումը չէր կարող իրականացվել առանց որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման: Մինչդեռ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար դետալների և սարքավորումների ձեռքբերման և տեղադրման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման մրցույթը հայտարարվել է հիմնական մրցույթից մեկ ամիս անց, իսկ տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության հետ պայմանագիրը կնքվել է միայն հուլիս ամսին, այսինքն «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2 ծածկագրով պայմանագիրը (19.05.2020թ.) կնքելուց երկու ամիս անց: Վերոհիշյալ փաստը հաստատել է նաև Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ներկայացուցիչը՝ թիվ ՍՅ-ԼՕ-2021/13 ընթացակարգի քննությանը նվիրված նիստի ընթացքում:

3. Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 19.05.2020թ. կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2 ծածկագրով պայմանագրի կատարման վրա ազդել է նաև առաջացած ֆորս-մաժորային իրավիճակը՝ կապված Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական գործողություններով: Ավելին, «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Սարիբեկյանը հայտարարված զորահավաքի շրջանակներում զորակոչվել է զինվորական ծառայության և մեկնել Արցախի Հանրապետություն՝ 21.10.2020թ., իսկ մինչ այդ երկու շաբաթ մասնակցել նախապատրաստական զորավարժությունների Հոկտեմբերյանում: Վերոհիշյալ փաստը ապացուցվում է ՀՀ ՊՆ զորահավաքային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանման կողմից ՀՀ բողոքներ քննող անձին ներկայացնելու համար տրված տեղեկանքով (համապատասխան ապացույցը կցվում է):

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ խնդրում ենք «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին չվերագրել "Գնումների մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-

ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պայմանագրի կնքումից հրաժարում, և վերջինիսի չներառել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

«Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն 18.02.2021թ.-ին ներկայացրած դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ինչպես արդեն նշել ենք, «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի և Երևանի քաղաքապետարանի միջև 19.05.2020թ. կնքվել է ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2 ծածկագրով պայմանագիր, ըստ որի «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն պետք է մատակարեր Երևանի քաղաքապետարանի Արաբկիր վարչական շրջանի բ/շ վերելակների դետալներ և սարքավորումներ /համապատասխան Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագրի- գնման ժամանակացույցի/:

Համաձայն՝ Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցի՝ ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել՝ մինչև 30.08.2020թ.:

Վերը նշված պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի կողմից՝ ի դեմս Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա.Դանիելյանի, 13.01.2021թ. միակողմանի մասնակի լուծվել է՝ հիմքում դնելով Պայմանագրի 1.1 կետը՝ այսինքն չի կատարվել պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակցույցով նախատեսված քանակի ապրանքների մատակարարումը:

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 13.01.2021թ. ծանուցմամբ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարը նշել է, որ մի շարք չափաբաժինների մասով եղել են թերի մատակարարումներ, իսկ 24-րդ չափաբաժնի մասով մատակարարում ընդհանրապես տեղի չի ունեցել:

Թերի մատակարարումների մասով «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն նախկինում ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է, որ պատճառը սկզբում եղել է տեխնիկական հսկողություն իրականացնող ընկերության հետ պայմանագիրը Երևանի քաղաքապետարանի հետ ուշ կնքելը, և համապատասխանաբար՝ տեխնիկական հսկողության ուշ իրականացումը, իսկ այնուհետև պատերազմական գործողությունները և «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի տնօրենի կամավորության հիմունքներով մասնակցությունը տվյալ պատերազմին, ինչը հանգեցրել է նրան, որ պայմանագրով նախատեսված ողջ ծավալի մատակարարումները ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի հասցրել կատարել:

Ինչ վերաբերում է Պայմանագրի 24-րդ չափաբաժնի մասով մատակարարում ընդհանրապես չկատարելուն, ապա այս կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Նման ձևակերպումը /ընդհանրապես չմատակարարելը/ ենթադրաբար գնումների հետ կապված բողոքներ քննող անձ մոտ ստեղծում է տպավորություն, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն որոշ պայմանագրային պարտականությունների կատարմանը ընդհանրապես ձեռնամուխ չի եղել: Սակայն այստեղ իրավիճակը եղել է միանգամայն այլ. Պայմանագրի 24-րդ չափաբաժնով նախատեսված է եղել արգելակման կոճի մատակարարում և տեղադրում /тормаз лифта/, ընդ որում միայն մեկ մատակարարում մեկ հասցեով:

Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավարի կողմից կատարված առաջադրանքի հիման վրա /պատվեր/ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն մեկնել է Արաբկիր 51 փողոց 9 շենք հասցեով և տեղում պարզել, որ բեռնատար վերելակի արգելակումը սարքին է և խնդիր չունի, և նման պայմաններում առկա չէ անհրաժեշտություն փոխել նշված արգելակման կոճը և համապատասխանաբար կատարել իջեցված պատվերը:

Վերոհիշյալի մասին «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն անմիջապես տեղեկացրել է Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար պարոն Արմեն Մկրտչյանին և առաջարկել հասցեն փոխարինել այնպիսի հասցեով, որտեղ վերելակը ունի անհրաժեշտություն կատարելու արգելակման կոճի մատակարարում և տեղադրում: Սակայն մինչև պայմանագրի լուծման ժամկետը «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն չի ստացել նոր պատվեր նոր հասցեով՝ Պայմանագրի 24-րդ չափաբաժնով նախատեսված մատակարարումը և աշխատանքը կատարելու համար:

Հարգելի՛ պարոն Օհանյան, նշված փաստը կարող է հաստատել նաև է Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար պարոն Արմեն Մկրտչյանը:

Հայտնում ենք, որ նման խնդիր եղել է նաև թերի մատակարարված մի շարք այլ չափաբաժիններով, երբ իջեցված պատվերի հիման վրա համապատասխան հասցեում կատարված զննության արդյունքում պարզվել է, որ վերելակը չի ունեցել վերանորոգման

անհրաժեշտություն, սակայն նոր պատվեր նոր հասցեով չի իջեցվել: Նշվածի մասին նույնպես քաջատեղյակ է Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմի կոմունալ տնտեսության և բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների հետ աշխատանքների կազմակերպման բաժինը:

Հարգելի պարոն Օհանյան, խնդրում ենք Պայմանագրի 24-րդ չափաբաժնի մասով մատակարարում ընդհանրապես չկատարելու հանգամանքը քննելիս և գնահատելիս՝ հաշվի առնել սույն դիրքորոշումը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/13 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 19.05.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 30.08.2020թ.-ը ներառյալ:

iii. Երևանի քաղաքապետարանի և «Գրիտիգ» ՍՊԸ-ի միջև 07.07.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/168» ծածկագրով Երևանի քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար սարքավորումների (դետալների և շինվածքների) ձեռքբերման և տեղադրման պետական գնման պայմանագիր:

iv. Պատվիրատուի և Մասնակցի միջև 15.12.2020թ.-ին կնքվել է թիվ 1-14 կատարողական ակտերը՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2» պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման մասով:

v. Պատվիրատուի կողմից 22.12.2020թ.-ին կազմված պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 1 եզրակացության համաձայն՝

Կատարված աշխատանքների				
N	Անվանումը	Տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը	կատարման ժամկետը

			Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	Փաստացի
1	Արաբկիր վարչական շրջանի վերելակների դետալների մատակարարման աշխատանքներ	Կատարվել են դետալների մատակարարման աշխատանքներ. ճոպան Φ 10,8մմ, ներդիր ռեզինով, հակակշիռ զսպանակ, խցիկի պատեր և առաստաղ, կիսակցորդիչ մատիկներով, ճոպան Φ 8.3 մմ, կախովի մալուխ, կանչի ապարատ, հարկային փոխանջատիչ, գլխավոր էլ. շարժիչ, էլ. շարջիչ, կոնտակտոր, պլաֆոն	298 դետալ	195 դետալ	19.05.2020թ.-30.08.20.20թ.	07.07.2020թ.-15.12.2020թ.

vi. Պատվիրատուի կողմից 21.12.2020թ.-ին կազմված տեղեկանքի համաձայն՝ կողմերի միջև կնքված Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ Մասնակցից գանձվել է տույժ 160 869 ՀՀ դրամ գումարի չափով, որը հաշվարկվել է 18.10.2020թ.-ից 15.12.2020թ.-ը ընկած ժամանակահատվածի՝ 42 աշխատանքային օրվա համար:

vii. Երևանի քաղաքապետի 16.11.2020թ.-ի լիազորությունները վերապահելու մասին թիվ 3576-Ա որոշման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումները, Երևան քաղաքի վերչական շրջանների ղեկավարները և Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի հասարակական կարգի պահպանության պետը լիազորվել են իրենց ղեկավարած ստորաբաժանումը ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին հավելվածի 20-րդ կետով սահմանված կարգով պատասխանատու ստորաբաժանում սահմանելու դեպքում իրականացնել պայմանագրի և (կամ) կանխավճարի և (կամ) որակավորման ապահովման վերադարձի, պայմանագրի լուծման, պայմանագրի ոչ պատշաճ կատարման և չկատարման հետևանքով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը:

viii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 13.01.2021թ.-ի թիվ 25/01-25/338 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 19.05.2020թ.-ին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2» ծածկագրով գնման պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել մինչև 30.08.2020թ.-ը:

Պայմանագիրը 3664100 ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 2015907 ՀՀ դրամի չափով, չի կատարվել 1 648 193 ՀՀ դրամի չափով ապրանքների մատակարարումներ, այսինքն պայմանագրով նախատեսված թիվ 24-րդ չափաբաժինը չի մատակարարվել, իսկ 5-րդ, 6-րդ, 11-ից-18-րդ, 20-րդ, 22-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինները թերամատակարարվել են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ.-ի թիվ 3576-Ա որոշում/, միակողմանի, մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.01.2021թ.-ի թիվ 26/26-1/536-2021 գրությամբ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը

կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 19.05.2020թ.-ին կնքված թիվ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2»

ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել մինչև 30.08.2020թ.-ը ներառյալ: 15.12.2020թ.-ին Պատվիրատուի և Մասնակցի միջև կնքվել է թիվ 1-14 կատարողական ակտեր՝ «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2» պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման մասով: Այնուհետև՝ Պատվիրատուի կողմից 22.12.2020թ.-ին կազմվել է պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ թիվ 1 եզրակացությունը, որով արձանագրվել են Մասնակցի կողմից մատակարարված դետալները, մասնավորապես Պայմանագրով նախատեսված 298 դետալի փոխարեն մատակարավել է 195 դետալ, որոնք պետք է մատակարարվեին 30.08.2020թ.-ին, սակայն մատակարարվել են 15.12.2020թ.-ին, ինչով պայմանավորված Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ Մասնակցից գանձվել է տույժ 160 869 ՀՀ դրամ գումարի չափով, որը հաշվարկվել է 18.10.2020թ.-ից 15.12.2020թ.-ը ընկած ժամանակահատվածի՝ 42 աշխատանքային օրվա համար, քանի որ Երևանի քաղաքապետարանի և «Գրիտիգ» ՍՊԸ-ի միջև 07.07.2020թ.-ին կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/168» ծածկագրով Երևանի քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար սարքավորումների (դետալների և շինվածքների) ձեռքբերման և տեղադրման պետական գնման պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 13.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 13.01.2021թ.-ի թիվ 25/01-25/338 ծանուցման համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի և «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի միջև 19.05.2020թ.-ին կնքված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-20/11-2» ծածկագրով գնման պայմանագրով ապրանքների մատակարարման վերջնաժամկետ էր սահմանվել մինչև 30.08.2020թ.-ը:

Պայմանագիրը 3664100 ՀՀ դրամի փոխարեն կատարվել է 2015907 ՀՀ դրամի չափով, չի կատարվել 1 648 193 ՀՀ դրամի չափով ապրանքների մատակարարումներ, այսինքն պայմանագրով նախատեսված թիվ 24-րդ չափաբաժինը չի մատակարարվել, իսկ 5-րդ, 6-րդ, 11-ից-18-րդ, 20-րդ, 22-րդ, 25-րդ և 26-րդ չափաբաժինները թերամատակարարվել են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, Երևանի քաղաքապետարանը, ի դեմս Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի /Երևանի քաղաքապետի 16.11.2020թ.-ի թիվ 3576-Ա

որոշում/, միակողմանի, մասնակի հրաժարվում է կնքված պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն լուծված և պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն 13.01.2021թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 13.01.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Անդրադառնալով սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից ներկայացված այն հանգամանքներին, որ Պայմանագրի կատարման վրա ազդել է նաև առաջացած ֆորս-մաժորային իրավիճակը՝ Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած ռազմական գործողություններով պայմանավորված, քանի որ Մասնակցի տնօրենը հայտարարված զորահավաքի շրջանակներում զորակոչվել է զինվորական ծառայության և մեկնել Արցախի Հանրապետություն՝ 21.10.2020թ.-ին, ինչպես նաև այն, որ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգման համար դետալների և սարքավորումների ձեռքբերման և տեղադրման աշխատանքների հանձնումը չէր կարող իրականացվել առանց որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման, իսկ վերոնշյալ պայմանագիրը կնքվել է 2020թ.-ի հուլիսի 07-ին, ապա Բողոքներ քննող անձը, սույն գործի փաստերի հիման վրա, հարկ է համարում փաստել, որ կողմերի միջև պայմանագիրը կնքվել է 19.05.2020թ.-ին, իսկ Մասնակցի տնօրենը զորակոչվել է 21.10.2020թ.-ին: Ինչպես նաև, հատկանշական է, որ Մասնակցի կողմից, այնուամենայնիվ, 15.12.2020թ.-ին մատակարարվել է պայմանագրով նախատեսված ապրանքների (դետալների) որոշ խմբաքանակ, ինչի պայմաններում հերքվում է պայմանագրի կատարման արդյունքի վրա վերոնշյալ ֆորս-մաժորային իրավիճակի ազդեցությունը:

Ընդ որում, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ սույն գործի քննության ընթացքում Մասնակցի կողմից չներկայացվեց որևէ վերաբերելի և թույլատրելի ապացույց առ այն, որ Պայմանագրով նախատեսված ապրանքների հանձման և տեղադրման աշխատանքների համար էական խոչընդոտ է հանդիսացել տեխնիկական հսկողության ծառայությունների պայմանագիրը 07.07.2020թ.-ին կնքելու հանգամանքը,

որի արդյունքում հնարավոր կլիներ փաստել Մասնակցի կողմից թույլ տված խախտման՝ վերջինիս կամքից անկախ հիմքերի պատճառների առկայությունը, հատկապես այն պարագայում, երբ վերջինիս կողմից Պայմանագրով նախատեսված ապրանքները հանձնվել և աշխատանքները կատարվել են 15.12.2020թ.-ին: Այսինքն Մասնակիցը տեխնիկական հսկողության պայմանագրի կնքման օրվանից մինչև 21.10.2020թ.-ը տնօրենի զորակոչվելը՝ երեք ամիս ավելի, հնարավորություն է ունեցել կատարելու պայմանագրով նախատեսված պարտավորությունները, որն էլ մասամբ կատարվել է:

Փաստերը, որոնք, օրենքի կամ նորմատիվ իրավական ակտերի համաձայն, պետք է հաստատվեն միայն որոշակի ապացույցներով, չեն կարող հաստատվել այլ ապացույցներով:

Բողոքներ քննող անձը, անդրադառնալով Մասնակցի կողմից լրացուցիչ դիրքորոշմամբ ներկայացված այն հիմնավորմանը, որ 24-րդ չափաբաժնով նախատեսված արգելակման կոճի մատակարարման և տեղադրման համար մեկնել են Արաբկիր 51-րդ փողոցի 9-րդ շենքի հասցեով և տեղում պարզել են, որ բեռնատար վերելակի արգելակումը սարքին է և խնդիր չունի, և նման պայմաններում առկա չէ անհրաժեշտություն փոխել նշված արգելակման կոճը՝ առաջարկել հասցեն փոխարինել այնպիսի հասցեով, որտեղ վերելակը ունի անհրաժեշտություն կատարելու արգելակման կոճի մատակարարում և տեղադրում, հարկ է համարում փաստել, որ Մասնակցի կողմից 18.02.2021թ.-ին և 04.02.2021թ.-ին ներկայացված դիրքորոշումների միջև առկա է հակասություն: Առաջին դեպքում Մասնակիցը նշում է, որ պայմանագրով նախատեսված պարտավորությունները անհնար է եղել կատարել՝ ելնելով ֆորս-մաժորային իրավիճակից, ինչպես նաև տեխնիկական հսկողության ծառայությունների ծատուցման պայմանագրի ուշացումով, իսկ երկրորդ դեպքում նշում է, որ ցանկացել են 24-րդ չափաբաժնով նախատեսված արգելակման կոճը փոխարինել, սակայն դրա անհրաժեշտությունը առկա չի եղել՝ չնշելով հստակ ժամկետներ, թե ե՞րբ է վերջինս ցանկացել կատարել աշխատանքները՝ տեխնիկական հսկողության ծառայության մատուցման պայմանագրի կնքումից մինչև Մասնակցի տնօրենի զորակոչվելը, թե՞ մինչև 15.12.2020թ.-ը, երբ կազմվել է կատարողական ակտերը:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիրքորոշումները հակասում են իրար, ուստի և արժանահավատ չեն:

Անդրադառնալով Մասնակցի դիրքորոշմամբ ներկայացված այն հիմնավորմանը, որ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավար Ա. Դանիելյանի կողմից «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընթացակարգ նախաձեռնելու համար Մասնակցի տվյալները 13.01.2021թ.-ի թիվ 25/01-25/338 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկելն իրավաչափ չի եղել, քանի որ այն ուղարկվել է ոչ պատշաճ սուբյեկտի կողմից, ուստի և տվյալ ընթացակարգը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնելը ևս ոչ իրավաչափ է, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ վարչական շրջանի ղեկավարը, նշանակվելով Երևանի քաղաքապետի կողմից, գործում է վերջինիս անունից՝ հիմքը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 91-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետ: Ուստի, նման պայմաններում, սուբյեկտները նույնանում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով

նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 19.01.2021թ. թիվ 26/26-1/536-2021 գրությամբ «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/13 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Լիֆտէլեկտրոնիքս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**